

ՃԵՐ ԿՈՌԻՆԿԸ

Գետափին վրայ, կըռունկներու շարքին մէջ,
 Ան իր գըլուխը ծռեց.
 Դըրաւ կըտուցը թելին տակ, ու ծեր, խոնջ,
 Նուաղկոտ բիբով ըսպասեց
 Իր վերջին սեւ վայրկեանին.
 Երբ ընկերները ա՛լ մեկնիլ ուզեցին՝
 Ան չըկըրցաւ անոնց թռիչքին միանալ.
 Յագիւ բացաւ աչքն ու դիտեց օդին մէջ
 Խըմբակին չուն՝ որ կ'երթար
 Երդերէն վար կըրկռալով
 Յանձնուած լուրեր, բարեւեր,
 Եւ արցունքներ պանդուխտի:
 Ա՛հ, խեղճ թըռչուն. այդ դալկահար գըրկին մէջ
 Աշնանային ցուրտ լըռութեան՝ կը մեռնի:
 Փո՛ւճ է այլեւս երազել
 Գարուն մ'հեռուն, գաղջ հոսանքները օդին
 Ճախրող թելին տակ գօրեղ,
 Կամ սրունքներով ջըլեբաց
 Անցքը պաղուկ առուակներէ, մեծ վըզին
 Մըխըրճումները շամբերուն մէջ կանանչ,
 Փուճ է այլեւս երազել:
 Թելերը հայ կըռունկին
 Ա՛լ յոգնած են ճամբորդելէ: Ան եղաւ
 Յաւատարի՛մ սըրտաճըմիկ պաշտօնին,
 Փոխադրեց շա՛տ արցունքներ.
 Ո՛րչափ հարսեր իրենց սըրտերն հըրատապ
 Իր քընքշական փետուրներուն մէջ դըրին,
 Ո՛րչափ մայրեր եւ որդիներ բաժնըւած